

**Արձանագրություն N 4**  
**ԵԼՀ ֆակուլտետի գիտխորհրդի**

**18.12.2019թ. նիստի**

**Օրակարգ**

1. ԵԼՀ ֆակուլտետի դեկան Բ.Գ.Թ., դոցենտ Գ. Բարսեղյանի տարեկան հաշվետվություն:
2. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին գիտխորհրդի **36** անդամներից **30**-ը:

Նիստին ներկա էին նաև ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գ.Գևորգյանը և հումանիտար և հասարակագիտական մասնագիտությունների գծով պրոռեկտոր հ.գ.թ. Է.Ասրիյանը: Նիստի նախագահող ընտրվեց Բ.Գ.Թ., պրոֆեսոր Ս. Գասպարյանը:

ԼՍԵՑԻՆ՝ ԵԼՀ Ֆակուլտետի դեկան Գ.Բարսեղյանը ներկայացրեց հաշվետվությունը 2018-2019 ուստարվա ուսումնամեթոդական, գիտական և դաստիարակչական աշխատանքների վերաբերյալ: Նա նշեց, որ ԵԼՀ ֆակուլտետի դեկանի պաշտոնում 2018-2019 ուստարվա ընթացքում ԵՊՀ գործող կանոնադրության և օրինադրության իրավասության շրջանակներում իրականացրել է ուսումնամեթոդական, գիտական և դաստիարակչական աշխատանքների ընդհանուր ղեկավարությունը:

**Ուսումնամեթոդական և դաստիարակչական աշխատանքներ**

Ուսումնական և ուսումնամեթոդական աշխատանքների բնագավառում Ֆակուլտետում իրականացվել է զգալի աշխատանք, որի շրջանակում հատկապես կարևորվում են հետևյալ աշխատանքները.

- Ամենակարևորների շարքում պետք է նշել Ֆակուլտետի տարբեր ամբիոններում գործող ուսումնական աշխատանքային պլաններով նախատեսված մասնագիտական դասընթացների դասավանդման ապահովումը և դրա վերահսկողության իրականացումը: Ընդ որում մշտապես տեսադաշտում է եղել ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի մշակման, լրամշակման և բարելավման գործընթացը: Մեր ամբիոնների ուշադրությունից դուրս չի մնացել նաև դասագրքերի, ուսումնամեթոդական ձեռնարկների և դասավանդման արդյունավետությանը նպաստող տարբեր այլ նյութերի հավաքագրման, ստեղծման ու հրատարակման աշխատանքը:
- Դեկանի գործունեության կարևորագույն կողմերից է բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական գործընթացների, ընթացիկ և հանրագումարային քննությունների և ստուգարքների նախապատրաստման և իրականացման աշխատանքների ընդհանուր ղեկավարությունը, որը, շնորհիվ ամբիոնների հետ հետևողական աշխատանքի, նույնպես կատարվել է հավուր պատշաճի:
- Ֆակուլտետում մշտական ուշադրության կենտրոնում է ուսումնական գործընթացի արդյունավետության ապահովման կարևորագույն գրավականներից մեկը՝ ուսումնական և աշխատանքային կարգապահության խնդիրը: Դեկանատի և դեկանի տեղակալների ջանքերով նվազագույնի է հասցվել անհարգելի բացակայությունների թիվը: Լուրջ միջոցներ են ձեռնարկվել ինչպես դեկանատի, այնպես էլ ռեկտորատի կողմից՝ կանխելու անհարգելի

բացակայությունները, շատերը նկատողություն են ստացել, ընթացք է տրվել տարբեր դասախոսների բողոքներին, սակայն դժվար է վստահաբար ասել, որ բացակայությունների խնդիր այլևս չունենք: Եվ այս հանգամանքը շարունակում է մնալ մտահոգիչ հարցերի շարքում, քանի որ դասախոսի փոխանցած գիտելիքը լավագույն ձևով ընկալելու լավագույն ճանապարհը դասախոսին լսելն է, լսարանում քննարկելը և ապա ինքնուրույն աշխատանքով այն յուրացնելը: Ֆակուլտետային իրականության մեջ երբեմն տեղ գտնող՝ դասախոսների անհարգելի բացակայությունները նույնպես հաջողվել է նվազագույնի հասցնել:

### **Գիտահետազոտական աշխատանքներ**

2018-2019 ուսումնական տարին գիտահետազոտական աշխատանքների առումով ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի համար ավարտվել է բավականին արդյունավետ: Ֆակուլտետի 9 ամբիոններն էլ ջանք ու եռանդ չեն խնայել մնալու իրենց գիտական բարձր մակարդակի վրա, տարին ավարտելու բարձր արդյունավետությամբ: Ընդհանուր առմամբ ԵԼՀ ֆակուլտետի 9 ամբիոնների գիտահետազոտական աշխատանքների արդյունքներն են հրատարակված մի քանի մենագրություններ և բազմաթիվ գիտական հոդվածներ, որոնք հրատարակվել են մեր հանրապետության և արտերկրի հայտնի ամսագրերում: Թե՛ գիտական և թե՛ ուսումնական առումով չափազանց կարևոր և օգտակար է հաշվետու ուսումնական տարում արտերկրի տարբեր առաջատար համալսարաններից ֆակուլտետ ժամանած որակյալ մասնագետների դասախոսությունների ունկնդրումը և քննարկումները կազմակերպելու գործը, որը նույնևս շատ արդյունավետ է ընթացել և դեռ շարունակվում է: 2019 թվականի ընթացքում ֆակուլտետում ավելի է աշխուժացել ուսանողական կյանքը: Մեր ուսանողները ակտիվ մասնակցություն են ունեցել թե՛ Երևանի պետական համալսարանի, և թե՛ հանրապետության այլ բուհերի

կողմից իրականացվող մի շարք ուսանողական միջոցառումների: Ֆակուլտետի ՈՒԳԻ և ՈՒԽԻ ջանքերով հաշվետու տարում ֆակուլտետում անցկացվել են ուսանողների ընդհանուր գիտելիքների և մտահորիզոնի զարգացմանը ուղղված մի ամբողջ շարք հետաքրքիր ձեռնարկումներ, սեմինարներ, այցելություններ պատմամշակութային վայրեր, թանգարաններ և այլն:

## **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՍԲԻՈՆ**

Ֆակուլտետի ամենամեծ ամբիոնը անգլիական բանասիրության ամբիոնն է, որը հաշվետու ժամանակահատվածում ակտիվ գործունեություն է իրականացրել ուսումնական, գիտական, գիտակազմակերպական և հրատարակչական ոլորտներում:

Անգլիական բանասիրության ամբիոնում ակտիվ աշխատանքներ են իրականացվել ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի վերանայման ու լրամշակման ուղղությամբ, օրացուցային պլանների և ուսուցման բովանդակության համապատասխանությունը ճշգրտելու և հիմնական դասագրքերի արդյունավետությունը քննարկելու և անհրաժեշտ փոփոխություններ ներմուծելու ուղղությամբ: Ամբիոնը ակտիվորեն մասնակցում է նաև մագիստրոսական ծրագրերի մոնիտորինգի իրականացման գործընթացին, ինչպես նաև ներգրավված է մագիստրոսական ծրագրերում ընդգրկված դասախոսներին ներկայացվող չափորոշիչների մշակման պիլոտային ծրագրի իրականացման աշխատանքներում: Ամբիոնը մշակել և հաստատման ընթացքի մեջ է դրել բակալավրական նոր մասնագիտություն՝ հաշվի առնելով աշխատաշուկայի պահանջարկը:

Մեծ է ամբիոնի ակտիվությունը միջազգային համագործակցության դաշտում: Ամբիոնի վարիչ Բ.Պ.Պ., պրոֆեսոր Ս. Գասպարյանի և Վենետիկի Կա՛Ֆոսկարի համալսարանի մասնագետների ակտիվ ջանքերի շնորհիվ սկիզբ

առած Erasmus+ նախագիծը շարունակում է գործել մեծ արդյունավետությամբ, և հաշվետու ժամանակաշրջանում Կա՛Ֆոսկարի համալսարան են այցելել 6 ուսանող և 2 դասախոս: Բացի Կա՛Ֆոսկարի համալսարանից՝ ամբիոնի մասնագետները բարձր արդյունավետություն են գրանցել նաև եվրոպական այլ համալսարաններում (Բոլոնիայի, Յաշի և այլն)՝ ներկայացնելով դասախոսություններ ամբիոնում մշակված և դասավանդվող մի շարք ժամանակակից գիտակարգերի շրջանակում: Անգլիական բանասիրության ամբիոնում մեծ ակտիվություն է նկատվում նաև գիտահետազոտական գործունեության դաշտում: Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնում հրատարակվել է 4 մենագրություն, 47 հոդված, որից 17-ը արտերկրում: Դասագրքեր, ձեռնարկներ, հոդվածների ժողովածուներ շարքում առկա է 6 հրատարակություն: Տարբեր գիտաժողովներում կարդացվել է 46 զեկուցում, որից արտերկրում՝ 8-ը: Ամբիոնի անդամները վարել են 5 գիտական սեմինար, որից 4-ը արտերկրում: Ամբիոնը շարունակում է “Armenian Folia Anglistika” գիտական հանդեսի հրատարակությունը՝ տարեկան 2 համար:

Անգլիական բանասիրության ամբիոնն ունի 2 առկա և 3 հեռակա ասպիրանտ, որոնք ակտիվ աշխատանք են տանում իրենց հետազոտական աշխատանքները ժամանակին ավարտելու և պաշտպանության ներկայացնելու համար:

Գիտահետազոտական աշխատանքների շարքում հիշատակության են արժանի երկու գիտահետազոտական բազային լաբորատորիաները, որոնք գործում են ամբիոնի բազայի վրա: Դրանք են “Անգլալեզու հակահայկական քարոզչական դիսկուրսի հետազոտությունների” և “Բրիտանական գրականության և լեզվամշակույթի ուսումնասիրության” լաբորատորիաները, որոնք երկուսն էլ արդյունավետ աշխատում են նշված ոլորտներում, և դրանց արդյունավետության վկայությունը տարբեր հրատարակությունների,

միջազգային գիտաժողովների, գիտական սեմինարների կազմակերպման ու մասնակցության առկայությունն է և ձեռք բերված արդյունքների ներդրումը նաև ավարտական աշխատանքների, մագիստրոսական և թեկնածուական աստենախոսությունների մեջ:

Գիտահետազոտական դաշտում ամբիոնը համագործակցում է արտերկրի մի շարք համալսարանների հետ (Մոսկվայի պետական համալսարան, Կոստրոմայի համալսարան, Վենետիկի Կա՛Ֆոսկարի, Էդինբուրգի համալսարաններ և այլն): Առանահատուկ հիշատակության և բարձր գնահատականի է արժանի սեպտեմբերին կազմակերպված “Լեզու, մշակույթ, հաղորդակցություն” միջազգային գիտաժողովը՝ նվիրված ԵՊՀ 100-ամյակին, որն անցկացվեց բարձր մակարդակով թե՛ գիտական և թե՛ կազմակերպական առումով:

### **Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոն**

Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը 2018-19. ուստարվա ընթացքում կենտրոնացրել է իր գիտամանկավարժական աշխատանքը ոչ միայն գրավոր թարգմանության հմտությունների զարգացման վրա, այլև կարևոր շեշտ է դրել բանավոր թարգմանության (հաջորդական և համաժամանակյա) յուրահատկությունների դասավանդման վրա, որին հաջորդեց 2 նոր սինխրոն լսարանների ստեղծումն ու գործարկումը:

Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի աշխատանքները ընթացել են ըստ հաստատված ուսումնական պլանի: Այնուամենայնիվ, ամբիոնը նպատակահարմար է գտել փոփոխություններ կատարել գործող մագիստրոսական ծրագրում՝ ներմուծելով աշխատաշուկայի պահանջներով պայմանավորված նոր առարկաներ (գրոսավարական տեքստի համընթաց

թարգմանություն, զբոսավարական ոլորտի գովազդային տեքստերի թարգմանություն, զբոսավարական տեքստերի գրավոր թարգմանություն, միջազգային զբոսավարության մշակույթ և վարքագիծ, երկրագիտություն, գրաբար): Կատարվել են նաև որոշ փոփոխություններ բակալավրի ուսումնական ծրագրում, որը հնարավորություն կտա ուսանողներին ավելի խորացնել իրենց գիտելիքները ինչպես տեսական, այնպես էլ գործնական դաշտում:

Կարևորագույն ձեռքբերում է նոր “Վարչագործարարական թարգմանություն” մագիստրոսական կրթական ծրագրի մշակումը: Այս ծրագրի ստեղծման գործընթացում ամբիոնը համագործակցել է ինչպես ներֆակուլտետային ամբիոնների հետ, այնպես էլ Իրավաբանության և Տնտեսագիտության ֆակուլտետների հետ:

Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնը ակտիվ է նաև արտերկրից ժամանած մասնագետների դասախոսությունները իր ուսանողներին և դասախոսական կազմին մատուցելու հարցում:

Ուսումնական տարվա ընթացքում կազմակերպվել են մի շարք արտալսարանային աշխատանքներ, այդ թվում՝ սեմինարներ, հանդիպումներ թարգմանիչների հետ, օտար լեզուներով կինոդիտումներ և քննարկումներ: Տեղի են ունեցել այցելություններ թանգարաններ, ԹՈՒՄՈ կենտրոն, կազմակերպվել են միջոցառումներ գրքի տոնի կապակցությամբ: Հոկտեմբերին անց է կացվել թարգմանչաց տոնը :

Հաշվետու տարում ամբիոնը տպագրել է 12 հոդված:

Սույն տարվա հոկտեմբերին <<Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնը>> ի դեմս ամբիոնի վարիչ Բ.Գ.Թ.,դոցենտ Ռ. Ղազարյանի մեծ

հաջողությամբ անցկացրեց միջազգային գիտաժողով «Թարգմանություն և կրթություն» խորագրով :

Այս տարվա նոյեմբեր ամսին ամբիոնի ղեկավարությունը Գ.Բարսեղյանի հետ միասին , Գերցենի անվան պետական մանկավարժական համալսարանին կից գործող բարձրագույն թարգմանչական դպրոցի հրավերով այցելեցինք Սանկտ-Պետերբուրգ, որտեղ ունեցան մի շարք արդյունավետ հանդիպումներ : Արդյունքում նախատեսվում է կնքել միջբուհական պայմանագիր, իսկ Սանկտ-Պետերբուրգի թարգմանչական դպրոցը պատրաստվում է հուշագիր կնքել ԵՊՀ Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի հետ :

### **Միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոն**

Հաշվետու ժամանակահատվածը հատկապես կարևոր է եղել միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի համար, քանի որ ուսումնական գործընթացը անխափան կազմակերպելուն, ուսանողների ուսումնական ու գիտական աշխատանքները ուղղորդելուն զուգահեռ ամբիոնը ներգրավվել է միջազգային չափանիշներին համապատասխանող կրթական ծրագրեր, դասավանդման մեթոդներ մշակելու և ամբիոնում ներդնելու գործին:

Մագիստրոսական ծրագրերի շրջանակներում ամբիոնը համագործակցում է ԵՊՀ այլ հումանիտար ֆակուլտետների հետ՝ տնտեսագիտության, սոցիոլոգիայի, միջազգային հարաբերությունների, փիլիսոփայության և հոգեբանության՝ օգտագործելով այդ ֆակուլտետների առաջատար դասախոսների ներուժը:



Միջմշակութային հաղորդակցության ամբիոնը համագործակցում է SS ոլորտի մի շարք կազմակերպությունների հետ (մասնավորապես՝ Synergy Armenia և Microsoft), որոնց մասնագետները վարպետության դասընթացներ են վարում բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների համար ինչպես համալսարանում, այնպես էլ տվյալ կազմակերպություններում:

Միջմշակութային հաղորդակցության ամբիոնի դասախոսները ընդգրկված են նաև երկու այլ միջազգային գրանտային ծրագրերում: Առաջին ծրագիրը հովանավորվում է Նորվեգիայի կրթության միջազգային համագործակցության կենտրոնի կողմից: Այն համատեղ ծրագիր է, որն անցկացվում է Հարավային Կովկասի (Վրաստան, Հայաստան, Ադրբեջան) և Նորվեգիայի 4 գործընկեր բուհերի միջև:

Երկրորդ գրանտային ծրագիրը, որին մասնակցում է ամբիոնը, Շվեդիայի Մալմո քաղաքի համալսարանի և ԵՊՀ, Օդեսայի Մեչնիկովի անվ. համալսարանի, Բաթումիի Շ. Ռուսթավելիի անվ. համալսարանի և Մոլդովայի Բելթս քաղաքի Ա. Ռուսոյի անվ. համալսարանի հետ համատեղ իրականացվող ծրագիրն է, որը կրում է <<Միջազգայնացման նոր հորիզոններ>> խորագիրը:

Ամբիոնի դասախոսների կողմից տպագրվել է 4 հոդված և 1 դասագիրք: Ամբիոնն ունի երեք հեռակա ասպիրանտ:

### **Անգլերենի թիվ 1 ամբիոն**

Անգլերենի թիվ 1 ամբիոնը բացի ԵՊՀ տարբեր ֆակուլտետներում իրականացվող անգլերեն լեզվի դասընթացներից ամեն տարի անցկացնում է միջազգային TOEFL(ibt) դասընթացներ և քննություններ ինչպես ԵՊՀ, այնպես էլ ՀՀ պետական այլ բուհերի ասպիրանտուրայի հավակնորդների համար:

Ամբիոնը հաջողությամբ իրականացրել է ITEP քննություն՝ անգլերենի իմացության միջազգային վկայագրի տրամադրմամբ (ITEP - international test of English proficiency - անգլերենի իմացության միջազգային թեստ): Միջազգային թեստավորման փորձ ձեռք բերած ամբիոնի մի շարք դասախոսներ անց են կացնում լեզվի իմացության B1, B2 մակարդակի եվրոպական սանդղակին համապատասխան դասընթացներ: Ամբիոնի մի շարք դասախոսներ հանձնել են անգլերենի իմացության ITEP միջազգային թեստ և ստացել են C1, C2 մակարդակի եվրոպական սանդղակին համապատասխան միջազգային վկայագիր:

Շարունակվում է FLSP պարբերականի հրատարակությունը ամբիոնի կողմից:

Հաշվետու տարում ամբիոնի դասախոսները, մասնավորապես, Մ. Ապրեսյանը ակտիվորեն մասնակցել է միջազգային գիտաժողովների Երևանում, Մոսկվայում, Տոմսկում:

Ամբիոնը զգալի աշխատանք է կատարել նաև մագիստրոսական ծրագրերի վերափոխման և լրամշակման գործում:

Անգլերենի թիվ 1 ամբիոնի դասախոսները հեղինակել են մի շարք դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ և տեխնիկական բառարաններ: Մասնավորապես՝ հրատարակվել է 5 դասագիրք, 3 ուսումնական ձեռնարկ, 1 մենագրություն, այն է՝ ամբիոնի մ.գ.թ դոցենտ Ա. Ոսկանյանի <<Անգլերեն իրավաբանական ենթալեզվի ուսուցման միջմշակութային հայեցակերպը>> վերնագրով մենագրությունը:

Նշվեց նաև, որ տարեվերջին անգլերենի թիվ 1 ամբիոնը հանձն է առել կյանքի կոչելու <<լեզվի կենտրոնի>> գաղափարը:

## Անգլերենի թիվ 2 ամբիոն

Անգլերենի թիվ 2 ամբիոնն իր գործունեությունը ծավալում է մի քանի ուղղություններով՝ **ուսումնական, ուսումնամեթոդական, գիտական, հրատարակչական և ուսումնադաստիարակչական:**

Ամբիոնը անգլերենի դասավանդումը հիմնականում ապահովում է ԵՊՏ մի շարք հումանիտար ֆակուլտետներում: Դասավանդման հիմքում են բակալավրիատում՝ անգլերենը որպես օտար/երկրորդ լեզու՝ (EFL/ESL) և անգլերենը մասնագիտական նպատակների համար (ESP), իսկ մագիստրատուրայում՝ անգլերենը ակադեմիական նպատակների համար (EAP) դասընթացները:

Անգլերենի թիվ 2 ամբիոնում վերանայվել են բակալավրի ուսումնական ծրագրերը, հաշվի առնելով այն փաստը, որ 2019-2020 ուս. տարվանից օտար լեզվի ժամաքանակը նվազեցվել է, և այսուհետ օտար լեզուները որպես *պարտադիր* դասընթաց բակալավրիատում կուսումնասիրվեն ընդամենը մեկ ուսումնական տարի: Այս հանգամանքը թելադրեց որոշակի փոփոխություններ կատարել:

Այնուամենայնիվ, այս ամենը հաշվի առնելով, ուսումնական գործընթացն առավել արդյունավետ դարձնելու, ինչպես նաև դասավանդման որակը բարձրացնելու նպատակով կիրառվում է տարբերակված անհատական մոտեցում յուրաքանչյուր ուսանողի նկատմամբ: Դա հնարավոր է դառնում թե՛ դասախոսների աշխատանքի շնորհիվ, թե՛ ամբիոնի կողմից ժամանակակից **տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ICT) կիրառմամբ:**

Անգլերենի թիվ 2 ամբիոնի դասախոսները նաև փորձել են կիրառել հեռավար ուսուցման համար նախատեսված Moodle համակարգը, որն օգնում է ապահովել դասավանդման նյութերի արդյունավետ բաշխում:

Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի դասախոսները գիտական տարբեր պարբերականներում հրատարակել են 23 հոդված և 4 միջազգային գիտաժողովների թեզիսներ:

Այս ուսումնական տարվա ընթացքում լույս է տեսել նաև 2 ուսումնական ձեռնարկ-դասագիրք՝ նախատեսված մանկավարժություն ուսումնասիրող ուսանողների համար:

Ուսումնական տարվա վերջին ամբիոնի վարիչ Ե.Երզնկյանը մասնակցել է 2019թ. մայիսի 13-15 Իտալիայի Ջենովա քաղաքում կայացած գիտաժողովին և հանդես է եկել զեկումումով:

Անգլերենի թիվ 2 ամբիոնի դասախոսները արդյունավետ գիտահետազոտական գործունեություն են ծավալում թեկնածուական հետազոտությունների կատարման ուղղությամբ: Ներկայումս ամբիոնն ունի 5 հայցորդ, որոնք աշխատում են թեկնածուական թեզերի վրա:

Հաշվետու ուս. տարում պաշտպանվել է 1 թեկնածուական ատենախոսություն (գիտական ղեկավար՝ Բ.Գ.Դ., պրոֆ. Ե.Լ.Երզնկյան):

Ամբիոնը՝ պատասխանատու լինելով «Անգլերենը ակադեմիական միջավայրում» դասընթացի A1-A2 լեզվի տիրապետման մակարդակների ծրագրի մշակման և իրականացման համար, անցյալ տարվանից վերանայել է A1-A2 մակարդակների թեստերի ձևաչափը՝ ապահովելով մակարդակների շարունակականությունը:

Անգլերենի թիվ 2 ամբիոնը կանոնավոր պարբերականությամբ հրատարակում է «Օտար լեզուները բարձրագույն դպրոցում» գիտական հանդեսը, որը լույս է տեսնում տարին 2 անգամ:

### **Ռոմանական բանասիրության ամբիոն**

2018-19 ուս. տարում ռոմանական բանասիրության ամբիոնը իր աշխատանքներն իրականացրել է 3 հիմնական ուղղություններով՝ ուսումնամեթոդական, գիտական և թարգմանչական: Ամբիոնը ապահովում է ռոմանական 2 լեզուների դասավանդում՝ իսպաներեն և իտալերեն:

Ամբիոնում կատարված աշխատանքների շարքում նախ և առաջ կցանկանայինք կարևորել բակալավրի նոր կրթական ծրագրերի ստեղծումը:

Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնը ընդունել է այցելու դասախոսների : Կազմակերպել է նրանց դասախոսություններն ու սեմինարները, ինչպես ուսանողների, այնպես էլ պրոֆեսորադասախոսական կազմի համար : Այցելուներ են եղել Մադրիդից, Բուենոս Այրեսից, Նեապոլից և այլն :

Ամբիոնի գործունեության առանցքային խնդիրներից է ուսումնական ձեռնարկների, մենագրությունների, հոդվածների հրատարակումը:

Ռոմանական բանասիրության ամբիոնում սովորող ուսանողները նույնպես ակտիվ մասնակցություն ունեն Erasmus+ նախագծում : Բարեբախտաբար ամբիոնն ունի նաև լեզվակիր դասախոս, Աննա Մարիա Սեկան,որի դասընթացները նպաստում են իտալական բաժնի ուսանողների հաղորդակցական կարողությունների զարգացմանը :

Իտալերենի դասավանդման գործում մեծ ներդրում ունի Հայաստանում Իտալիայի դեսպանատունը, ի դեմս դեսպան Վինչենցո դել Մոնակոյի, որը տրամադրում է տարբեր կրթաթոշակներ, կազմակերպում տարբեր միջոցառումներ:

Ակտիվ են նաև Իսպանիայի և Պորտուգալիայի համալսարանների հետ համագործակցության տարբեր ծրագրերը, որոնց մասնակցում են ամբիոնի զգալի թվով ուսանողներ :

Ռոմանական բանասիրության ամբիոնում արդեն ավանդույթ է դարձել Սերվանտեսի ինստիտուտի հետ համագործակցությամբ կազմակերպել “Իսպաներենը որպես օտար լեզու” որակավորման միջազգային քննությունը՝ օտար լեզուներին ներկայացվող եվրոպական արդի չափանիշներին համապատասխան:

Հայաստանում Իտալիայի դեսպանատան և Միենայի համալսարանի հետ համագործակցությամբ կազմակերպվել է իտալերենի CILS միջազգային քննությունը: Այս քննությունը տալիս է միջազգայնորեն ճանաչված դիպլոմ :

2018-2019 ուստարվա ընթացքում ռոմանական բանասիրության ամբիոնում որոշակի աշխատանքներ են կատարվել նաև օտար լեզուների դասավանդման կարևոր բաղադրիչի՝ տեխնիկական միջոցների ձեռք բերման ուղղությամբ: Իհարկե, մոտ 3-4 ամիս, մեծ ջանքեր գործադրելու շնորհիվ “Արցախ” բանկը բարեգործական ծրագրերի շրջանակում համալսարանին տրամադրեց որոշակի գումար՝ ամբիոնի համար գնելու ինտերակտիվ գրատախտակ և համակարգիչ:

Ուսումնական գործընթացներից գատ՝ ամբիոնում կազմակերպվել են մի շարք մշակութային միջոցառումներ:

### **Գերմանական բանասիրության ամբիոն**

Գերմանական բանասիրության ամբիոնում ներդրվում են դասավանդման նոր մեթոդներ, կատարվում է անհատական աշխատանք և խրախուսվում են բոլոր առաջադեմ նախաձեռնությունները: Այս առումով մեծ ներդրում ունեն օտարերկրացի դասախոսները, որոնք ակտիվորեն կիրառում են իրենց դասավանդման փորձը, բացահայտում են ուսուցման առավել արդյունավետ ուղիներ:

Ամբիոնի դասախոսներին հնարավորություն է ընձեռվում կատարելագործել իրենց հմտություններն ու գիտելիքները տարբեր սեմինարներում ու որակավորման բարձրացման դասընթացներում, որտեղ մեծ աջակցություն են ցուցաբերում ինչպես Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայությունը, այնպես էլ այլ միջազգային կրթական կազմակերպություններ: Նախորդ ուսումնական տարում ևս, գերմանական

բաժնի ուսանողները կարողացան հաղթահարել գերմանական, ավստրիական և համաեվրոպական կրթական ծրագրերի մրցույթային պայմանները և մասնակցել դրանց: Բաժնի ուսանողներն ու դասախոսները ակտիվորեն մասնակցել են ինչպես դեսպանատների այնպես էլ այլ կազմակերպությունների կողմից կազմակերպված տարբեր միջոցառումներին:

Գիտական աշխատանքի առումով հաշվետու ժամանակաշրջանում հրատարակվել է 2 դասագիրք, 1 ուսումնական ձեռնարկ և 4 գիտական հոդված:

Ամբիոնը ձեռնարկել է նաև հատկապես մագիստրոս շրջանավարտների աշխատանքի տեղավորմանը օժանդակող միջոցառումներ: Այս նպատակով ստեղծվել են անմիջական կապեր ինչպես տեղական, այնպես էլ մեր երկրում գործող օտարերկրյա տարբեր կազմակերպությունների հետ:

### **Ֆրանսիական բանասիրության ամբիոն**

Հաշվետու տարում, ինչպես և նախորդ տարիներին, ֆրանսիական բանասիրության ամբիոնի հիմնական խնդիրը եղել և մնում է ուսումնական պրոցեսի արդյունավետ կազմակերպումը:

Ինչպես ամեն տարի, այս տարի ևս ուսումնամեթոդական աշխատանքներ են ծավալվել համալսարանի Իջևանի մասնաճյուղում: Այդ հաստատության ֆրանսերեն լեզվի դասախոսներն ու ստաժորները պարբերաբար մասնակցում են ամբիոնի կազմակերպած միջոցառումներին, ինչն անշուշտ նպաստում է դասավանդման ոլորտում նրանց փորձի կատարելագործմանը:

Այս ուստարում, ինչը գուցե աննախադեպ երևույթ է հանրապետության բուհերում, ամբիոնը կազմակերպել է ֆրանսերենի ուսուցման անվճար դասընթացներ: Մասնակիցների քանակն ավելի քան 300 էր՝ ԵՊՀ դասախոսներ, ուսանողներ և աշխատակիցներ: Դասերը մեկնարկել են

նոյեմբեր ամսից: Խմբերի հետ, ամբիոնի դասախոսներից բացի, աշխատել է նաև Ֆրանսիայից ժամանած մասնագետը:

Հաշվետու ուսումնական տարում արդյունավետ էր նաև գիտահետազոտական կյանքը: Լույս է տեսել ֆրանսիական բանասիրության արդիական խնդիրներին առնչվող թվով 4 հոդված, 2 ուսումնական ձեռնարկ, մեկ մենագրություն, այն է՝ Ա. Հարությունյան, Ջ, Հարությունյան, <<Գունանունների հավելիմաստները ժամանակակից ֆրանսերենում>>

Ամբիոնն ակտիվ մասնակցություն ունի նաև ֆրանսերենի դպրոցական դասագրքերի գործին:

Ֆրանսիական բանասիրության ամբիոնի մի քանի հայցորդներ ու դասախոսներ /թվով յոթը/ շարունակում են աշխատանքը ատենախոսական թեզերի վրա:

Ամբիոնն ունի նաև երկու հեռակա ասպիրանտ, ինչպես նաև Իրանից ժամանած առկա ուսուցման մեկ ասպիրանտ:

Ամբիոնում ակտիվ է նաև միջազգային համագործակցությունը, մասնավորապես, Ֆրանսիայի Մոնպելիե և Էքս քաղաքների համալսարանների հետ:

### **Արտասահմանյան գրականության ամբիոն**

Հաշվետու ուսումնական տարում արտասահմանյան գրականության ամբիոնը որոշակիորեն կատարել է իր առջև դրված պարտականությունները՝ նկատելի առաջընթաց գրանցելով ինչպես ուսումնակրթական, այնպես էլ գիտամեթոդական աշխատանքների գծով:

Ամբիոնի դասախոսները պարբերաբար մասնակցում են մեր հանրապետության այլ բուհերում և արտերկրում անցկացվող գիտաժողովների: Տպագրված հոդվածների և մենագրությունների քանակը



կազմում է տասնչորս: Հաշվետու տարում լույս է տեսել Անուշ Սեդրակյանի կազմած <<Ֆրանսիական արդի պոեզիա>> անթոլոգիան, տպագրվել է Արա Առաքելյանի մենագրությունը՝ նվիրված գերմանական վեպի պատմությանը՝ <<Նուբելյան գրքից>> մինչև <<Հուլունքախաղ>>:

Գիտա-մեթոդական ձեռնարկներով հանդես են եկել ամբիոնի մի քանի դասախոսներ:

Ներկա դրությամբ ամբիոնում իրենց հետազոտական աշխատանքներ են իրականացնում ութ հեռակա և մեկ առկա ասպիրանտներ, ինչպես նաև երկու հայցորդ: Առաջիկայում նախատեսվում է <<Համատեքստ>> պարբերականի վերահրատարակումը:

**ԱՐՏԱՀԱՅՎԵՑԻՆ՝** Արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ Ա.Սողոմոնյանը շնորհակալություն հայտնեց ֆակուլտետի դեկան Գ.Բարսեղյանին աշխատանքային ակտիվ ընթացքի համար: Հավելեց նաև, որ նա շատ լավ է հասկանում ուսանողներին և շատ արագ արձագանքում նրանց խնդիրներին:

**ԱՐՏԱՀԱՅՎԵՑԻՆ՝** Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի վարիչ Ռ.Ղազարյանը նույնպես շնորհակալություն հայտնեց դեկանին մանրամասն ու բովանդակալից ելույթի համար: Նշեց որ, դեկանին մեծ ու բարդ ֆակուլտետ է բաժին հասել, և նա ջանում է անել հնարավորը ֆակուլտետը իր բարձր դիրքում պահելու համար: Ռ.Ղազարյանը հավելեց նաև՝ չափազանց ուրախ է, որ աշխատում է Գ.Բարսեղյանի հետ:

**ԱՐՏԱՀԱՅՎԵՑԻՆ՝** Անգլերենի թիվ 1 ամբիոնի վարիչ Մ.Ապրեսյանը իր ելույթի մեջ նշեց, որ համաձայն է Ռ.Ղազարյանի հետ, հավելելով՝ ֆակուլտետին պետք էր մեկը, ով ակտիվ է, երիտասարդ ու բանիմաց: Հենց



Օգտվելով այն առիթից, որ նիստին ներկա էին ԵՊՀ ռեկտորի պաշտոնակատար Գ.Գևորգյանը և պրոռեկտոր Է. Ասրիյանը Հ.Բաղդասարյանը նշեց նաև, որ ֆակուլտետում նոր տեխնոլոգիական միջոցների զգալի պակաս կա: Հավելեց նաև, որ մեծ խնդիր է մագիստրոսական ծրագրում պորտուգալերեն լեզվի բացակայության հարցը: Նա նույնպես դրական գնահատեց դեկանի հաշվետվությունը:

**ԱՐՏԱՀԱՅՎԵՑԻՆ՝** Անգլերենի թիվ 2 ամբիոնի վարիչ Ե.Երզնկյանը նույնպես միացավ գործընկերների կարծիքին՝ դեկանի տարեկան հաշվետվությունը գնահատելով դրական: Ե.Երզնկյանը նույնպես օգտվելով այն առիթից, որ նիստին ներկա էին ԵՊՀ ռեկտորի պաշտոնակատար Գ.Գևորգյանը և պրոռեկտոր Է. Ասրիյանը առաջ քաշեց որոշ խնդիրներ: Նա ներկաների ուշադրություն հրավիրեց այն հանգամանքի վրա, որ իր ամբիոնում անգլերենի ժամաքանակը զգալիորեց նվազել է, ինչն էլ վատ է անդրադառնում ուսանողի համակարգված ու համապարփակ գիտելիքի ձեռքբերման վրա:

**ԱՐՏԱՀԱՅՎԵՑԻՆ՝** Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ Ս. Գասպարյանը նույնպես միացավ իր գործընկերների կարծիքին: Նա նշեց, որ Գ.Բարսեղյանը ջանք ու եռանդ չի խնայում ֆակուլտետը ավելի կատարյալ դարձնել: Նա փաստեց նաև, որ միահամուռ ուժով կարելի է հասնել ավելի լավ արդյունքների: Ս.Գասպարյանը հավելեց նաև, որ հնչած ելույթի մեջ մեծ է նաև նախկին դեկան Ս.Աբրահամյանի ներդրումը: Նա առաջարկեց ներկայացված հաշվետվությունը գնահատել դրական:

**ԱՐՏԱՀԱՅՎԵՑԻՆ՝** ԵՊՀ ռեկտորի պաշտոնակատար Գ.Գևորգյանը սպառիչ պատասխան տվեց հնչեցրած խնդիրներին ու հարցադրումներին: Նա նշեց, որ դեկանի աշխատանքի մեջ գովելի է այն, որ նա ֆակուլտետի համար ջանում է անել առավելագույնը : Նա նույնպես հաշվետվությունը գնահատեց դրական:

**ԱՐՏԱՀԱՅՎԵՑԻՆ՝**

ԵԼՀ ֆակուլտետի դեկան Գ.Բարսեղյանը շնորհակալություն հայտնեց ջերմ ու անկեղծ խոսքերի համար: Հատուկ շնորհակալություն հայտնեց դեկանատի աշխատակիցներին, իր տեղակալներին, բոլոր ամբիոնների վարիչներին կառուցողական աշխատանքի համար: Գ.Բարսեղյանը շնորհակալություն հայտնեց նաև ԵՊՀ ռեկտորի պաշտոնակատար Գ.Գևորգյանին խնդիրներին արագ լուծում տալու համար, ԵՊՀ պրոռեկտոր Է.Ասրիյանին ֆակուլտետի ձայնը արագ տեղ հասցնելու համար, ինչպես նաև մյուս պրոռեկտորներին և ՈՒԳԸ և ՈՒԽ ուսանողներին:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝**

Գ.Բարսեղյանի տարեկան հաշվետվությունը գնահատել դրական:

Գիտխորհրդի նախագահ և դեկան, Բ.Գ.Թ., դոց.՝

Գ.Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար, Բ.Գ.Թ., դոց.՝

Մ.Դալայան

18.12.2019